ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/40-2

ք. Երևան «21» մայիսի 2021թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ

ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 14 637 420 (տասնչորս միլիոն վեց հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին;

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 4,Ա.Մոկոյան փող. 109/8	ք. Երևան,Բուռնազյան փ, տ. 57
ՀՀ ՖԾ գործառնական վարչություն	ԷԿՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 90000110013 52	Հ/Հ 1660004598740100
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 00473169
Գլխավոր քարտուղար՝	տնօրեն
_____ Ա. Օհանյան	_____ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«21» 05 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/40-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
6	35111200/3	Պարանի բաշխիչ	Yiwu bingfend outdoor Camping Equipment CO. Ltd	Տես Հավելված 1.1	հատ	7974	79740	10	ք.Երևան Շիրակի 3-րդ նրբ. N6	10	2021թ 2-րդ եռամսյակ
7	35111200/4	Փրկարարական կարաբին		Տես Հավելված 1.1	հատ	7974	159480	20		20	2021թ 2-րդ եռամսյակ
8	35111200/5	Փրկարարական ժումառ		Տես Հավելված 1.1	հատ	23400	468000	20		20	2021թ 2-րդ եռամսյակ
9	35111200/6	Անվտանգության գոտի		Տես Հավելված 1.1	հատ	59160	8578200	145		145	2021թ 2-րդ եռամսյակ
13	18421130/3	Փրկարարական ձեռնոց		Տես Հավելված 1.1	զույգ	20760	2698800	130		130	2021թ 2-րդ եռամսյակ
23	44511100/1	Լոմ	Aryan International Trade Co Ltd	Տես Հավելված 1.1	հատ	2040	40800	20		20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր
25	44511100/3	Քլունգ	Aryan International Trade Co Ltd	Տես Հավելված 1.1	հատ	2460	49200	20		20	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր
30	18931110/1	Ուսապարկ	Yiwu bingfend outdoor Camping Equipment CO. Ltd	Տես Հավելված 1.1	հատ	21360	2563200	120		120	2021թ 2-րդ եռամսյակ

* *Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ
Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝
Կ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ
ք. Երևան,Բուռնազյան փ, տ. 57
ԷԿՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1660004598740100
ՀՎՀՀ 00473169
տնօրեն
Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱ
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1.1
«21» 05. 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/40-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

N	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիրը
6	Փրկ. և արտ իրավիճակներում կիրառվող սարքեր / Պարանի բաշխիչ	Դյուրալյումինե ձուլվածքից. Կիսանները նախատեսված են մեկ կայանում զսպանակակեռիկներ կախելու և մեկ տեղում անվտանգության մի քանի կետեր ստեղծելու համար: Քաշը՝ 65-75 գրամ. Չափսերը՝ մմ: 90*84*8. Առավելագույն ճնշումը՝ առնվազը 30Կն (3000կգ) Մատակարարման ժամանակ ներկայացվում է **EN 12275:2013** ստանդարտին համապատասխանության սերտիֆիկատ:
7	Փրկ. և արտ իրավիճակներում կիրառվող սարքեր / Զսպանակակեռիկ	Զսպանակակեռիկ՝ դյուրալյումինե կամ տիտանե ձուլվածքից, ավտոմատ փականով և keylock սողնակով, EN 12275 միջազգային ստանդարտին համապատասխան: Քաշը՝ 80+/-5 գրամ Հորիզանական ամրությունը՝ 25kH Ուղղահայաց ամրությունը՝ 9 kH Ձևը նկարին համապատասխան: Մատակարարման ժամանակ ներկայացվում է **EN 12275:2013 և/կամ UIAA CE 1019 և/կամ EN12275** տանդարտին համապատասխանության սերտիֆիկատ:
8	Փրկ. և արտ իրավիճակներում կիրառվող սարքեր / Ժումառ	Պողպատե կամ դյուրալյումինե ձուլվածքից, նախատեսված պարանով վերելք կատարելու, ինքնապահովման և բեռներ ֆիքսելու համար: Ատամնավոր բռնակը պողպատից, ունի կտրվածք աղբը կամ սառույցը հեռացնելու համար: Սողնակը թույլ է տալիս մեկ ձեռքով հանգիստ բացել և փակել այն: Բռնակը պաշտպանված է էլաստիկ շերտով: Խմբաքանակը հավասարաչափ բաշխվածությամբ՝ աջ և ձախ: Մեկ միավորի քաշը՝ 195-250 գրամ: Պարանի սահմանված տրամաչափը՝ 8-13 մմ: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ CE EN567 **և/կամ CE/UIAA** ստանդարտին:
9	Փրկ. և արտ իրավիճակներում կիրառվող սարքեր / Անվտանգության գոտի	Բազմաֆունկցիոնալ անվտանգության համակարգ արագ ձգվող կարգավորման ճարմանդներով նախատեսված աշխատանքային դիրքում դիրքավորվելու համար: Էրգոնոմիկ գոտին և հավելյալ շերտերով կրծքային գոտիները ապահովում են առավելագույն հարմարավետություն: Համակարգը ունի ուսային գոտու ետևի V-աձև միացման կետ և լրացուցիչ ամրացման կետ կրծքավանդակի հատվածում: Չափս N1 - ոտքի շրջանագիծը՝ 58-60սմ գոտկատեղինը՝ 46-144սմ. Չափս N2 – ոտքի շրջանագիծը՝ 66-98սմ գոտկատեղինը՝ 88-184սմ. Մատակարարման ժամանակ ներկայացվում է **89/686/EEC և EN361:2002** ստանդարտներին համապատասխանության սերտիֆիկատներ:
13	Փրկ. և արտ իրավիճակներում կիրառվող սարքեր / **Փրկարարական ձեռնոց**	Ձեռնոցներ էրգոնոմիկ, հնգմատնյա փրկարարական պարանով աշխատելու համար: Ձեռքի ափի և մատները կաշեպատ, կաշին՝ բնական, երկշերտ. Վերին հատվածը շնչող էլաստիկ նեյլոնից. Բազկամասը նեոպրենային գործվածքից, ինքնակպչուն ճարմանդով: Բազկակալերի կողային հատվածներում ամրացված բացվածքներ՝ զսպանակակեռիկի հարմարեցման համար: Չափսերը՝ M-30%. L-70%. Համապատասխանում է **CE EN 420 և/կամ EN 388 (3133)** պայմաններին, որի վերաբերյալ մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության

		սերտիֆիկատ:
23	Լոմ	Լոմ՝ կլոր ձևի, պատրաստված՝ 45 դասի պողպատից, աշխատանքային մասերը ամբողջովին կարծրացված: Գործիքի տրամագիծը 24+/-3 մմ, երկարությունն առնվազն՝ 1.2 մ, նախատեսված է ապամոնտաժման աշխատանքների համար:
25	Քլունգ	Կոթի երկարությունը 90+/-2 սմ, քլունգի երկարությունն առնվազն՝ 50 սմ, կտրող մասի չափը առնվազն՝ 5 սմ, կոթը փայտից բացառությամբ փշատերև անտառանյութի՝ չամի:
30	Ուսապարկ	Քաշը՝ 2-3 կգ Ծավալն առնվազն՝ 65 լ Գույնը՝ մոխրագույն/կարմիր, մոխրագույն/մոխրագույն-երկնագույն, սև/կապույտ, սև/կարմիր Կախոցը՝ ABS V2 Կտորը՝ Poly Oxford 600D PU Honey RipStop կամ համարժեք Հատակի կտորը՝ High Tech Լրացուցիչ առավելությունները՝ պաշտպանիչ պայուսակ, ամրուցիչ, ծավալային ցանցի կառուցվածք ունեցող նյութ՝ Air Mesh կամ համարժեք, լուսանդրադարձիչ ուսագոտի, կրծքային ձգի, լեռնային գույք-հանդերձանքի ամրացման հանգույցներ, ֆուրնիտուրա՝ Nifco կամ համարժեք:

ԳՆՈՐԴ
Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր բարտուղար՝
Կ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ
ք. Երևան,Բուռնազյան փ, տ. 57
ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1660004598740100
ՀՎՀՀ 00473169
տնօրեն
Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«21» 05. 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/40-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Պայմանագրի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
6	35111200/3	Պարանի բաշխիչ	-	-	-	-	-	23922	43857	43857	43857	79740	79740	79740	79740
7	35111200/4	Փրկարարական կարաբին	-	-	-	-	-	47844	87714	87714	87714	159480	159480	159480	159480
8	35111200/5	Փրկարարական ժումառ	-	-	-	-	-	140400	257400	257400	257400	468000	468000	468000	468000
9	35111200/6	Անվտանգության գոտի	-	-	-	-	-	2573460	4718010	4718010	4718010	8578200	8578200	8578200	8578200
13	18421130/3	Փրկարարական ձեռնոց	-	-	-	-	-	809640	1484340	1484340	1484340	2698800	2698800	2698800	2698800
23	44511100/1	Լոմ	-	-	-	-	-	12240	22440	22440	22440	40800	40800	40800	40800
25	44511100/3	Քլունգ	-	-	-	-	-	14760	27060	27060	27060	49200	49200	49200	49200
30	18931110/1	Ուսապարկ	-	-	-	-	-	768960	1409760	1409760	1409760	2563200	2563200	2563200	2563200
							Ընդամենը՝	**4391226**	**8050581**			**14637420**			**14637420**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:

ԳՆՈՐԴ
Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 90001100 1352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար

Կ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Օբորոն Տեքստիլ» ՍՊԸ
ք. Երևան,Բուռնազյան փ, տ. 57
ԷԿՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1660004598740100
ՀՎՀՀ 00473169
տնօրեն

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱ
(ստորագրություն)
Կ.Տ

«21» 05 2021թ. Հավելված N 3
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/40-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«21» 05. 2021թ. կնքված
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-21/40-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն